

ՎԵՐԱՄԻԱՑՈՒՄ ՎԵՆԵՏԻԿԻ ԵՒ ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ԶՈՅԳ ՃԻՒՂԵՐՈՒ

Մխիթարեան Միաբանութիւնը, Վենետիկի եւ Վիեննայի իր պատմական զոյգ ճիւղաւորումներով, յետ երկարամեայ բանակցութիւններու եւ քննարկումներու, Վենետիկի Սբ. Ղազար Մայրավանքին մէջ, 10-21 Յուլիս, 2000ին, կազմակերպեց միացեալ ընդհանուր արտակարգ ժողով մը, մասնակցութեամբ երկու հաստատութիւններու բոլոր միաբաններուն։ Սոյն ժողովի Միաբան Վարդապետները միասնաբար որոշեցին անմիջական եւ ամբողջական միութիւն մը իրականացնել, ստեղծելով Մխիթարեան միացեալ մէկ Միաբանութիւն, մէկ կեղրոնական Վարչութեամբ։

Պատմական այս քայլը կը զուգադիպի Մխիթար Վրդ. Սեբաստացիի կողմէ հիմնուած Միաբանութեան 300ամեակին, Քրիստոնէութեան 2000ամեայ յորելեանին, ինչպէս նաև Հայաստանի մէջ Քրիստոնէական Կրօնքի պաշտօնական ընդունման 1700ամեակին։

Ընդհանուր ժողովի 19 Յուլիսի նիստի ընթացքին, Հոգեհնորհ Հ. Եղիս Մ. Վրդ. Քիլաղպետան ընտրուեցաւ որպէս 15րդ Ընդհանուր Արքահայր Մխիթարեան միացեալ Միաբանութեան։

Ներկայ հաղորդագրութեամբ կը յայտարարենք որ այսուհետեւ գոյութիւն ունի մէկ Մխիթարեան Միաբանութիւն, որուն գլխաւոր կեղրոնատեղին է Վենետիկի Սբ. Ղազարի Մայրավանքը, իսկ Վիեննայի Վանքը կը դառնայ իբրեւ առաջին գլխաւոր Մենաստան։ Վիեննայի այս Մենաստանը, իր կարգին, պիտի ունենայ տեղական Արքահայր տիտղոսը կը ող Վանահայր մը։

Զոյգ Միաբանութիւններու բոլոր առաքելավայրերն ու կեղրոնները պիտի կառավարուին նորընտիր Ընդհանրական Արքահօրմէ եւ իր միացեալ վարչական խորհուրդէն։

Դիւան Մխիթարեան Միաբանութեան
Վենետիկ - Սբ. Ղազար
իտալիա